

Մարտիրոս

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Խալաթ Սողոմոնյան
Հեռ. +374 77023955

Մարտիրոս գյուղը գտնվում է Հայաստանի Վայոց ձորի մարզում, մարզկենտրոնից 31 կմ հարավ-արևելք, Վայքի լեռների հյուսիսային լանջին: Հեռավորությունը Վայք քաղաքից 20 կմ, մայրաքաղաքից՝ 155 կմ: Գյուղը բաղկացած է հին և նոր բնակավայրերից, գտնվում է Գոգի լեռան ստորոտում, ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: Հին գյուղը 1960-ական թվականներին որակվել է որպես սողանքային գոտի և բնակության համար ոչ պիտանի: 1968 թվականին Մարտիրոսը տեղափոխվել է 2 կմ դեպի արևելք: Սահմանակից բնակավայրերն են՝ Զատիթափը, Սերսը, Խնձորուտը, հարավ-արևելքից սահմանակից է Նախիջևանին: Գյուղի տարածքը բաժանված է երկու ենթագոտիների՝ չոր լեռնատափաստանային և բարձր լեռնատափաստանային: Կլիման մեղմ է, զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Համայնքի տարածքը կտրտված է բազմաթիվ ձորերի և ձորակների խիտ ցանցով:

Մարտիրոսը մեկն է Վայոց ձորի, ինչպես նաև ողջ Հայաստանի այն սակավաթիվ գյուղերից, որի հիմնադրման ստույգ տարեթիվը և հիմնադրողների անունները պահպանվել են: Այդ կարևոր տեղեկությունը արձանագրված է գյուղամիջի մեծ աղբյուրի մոտ 1283թ. վարդագույն գրանիտից կանգնեցված երեք մետրից ավելի բարձրություն ունեցող գեղաքանդակ խաչքարի վրա՝ ներքևում հետևյալ արձանագրությամբ. <Ես՝ Դեղիկի որդի Մխիթարս, Իշխանաց իշխան Պռոշի և նրա որդի Հասանի հրամանով, 1283թ. շինեցի Մարտիրոս գյուղը և կանգնեցրի այս խաչքարը սուրբ վկայարանի (եկեղեցու) դռան առջև, ի բարեխոսություն և իմ ամուսին Մամջրին և իմ որդի Ղարիբ Շահին և իմ դուստր Ռուզաքանին, ովքեր որ ընթերցեք, հիշեցեք մեզ: Շինվեց Շնորհավորի ձեռքով>:

Փաստերը վկայում են, որ Մարտիրոսը Պռոշ իշխանի հրամանով կառուցվել է ոչ թե ամայի վայրում, այլ վերակառուցվել է մի գյուղ, որը ունեցել է իր բնակիչները: Մարտիրոսն իր ավելի քան 700 տարվա պամության ընթացքում թողել է բազմաթիվ պատմական ու մշակութային արժեքներ: Գյուղի ամենանշանավոր ճարտարապետական հնությունը 13-րդ դարի վիմափոր Սուրբ Աստվածածին վանքն է, որը գտնվում է գյուղից 2,5 կմ հարավ-արևելք, Նգար սարի ստորին հատվածում, որտեղից սկիզբ են առնում սառնորակ աղբյուրները: Վանքն ամբողջությամբ կերտված է Նգար սարի ներսում, ստորգետնյա լեռան մեջ: Ըստ պահպանված արձանագրությունների, վանքը 1286 թվականին կառուցել է Մարտիրոս Վարդապետը, իսկ ճարտարապետն է եղել քարագործ Գրիգորիկը: Վիմափոր եկեղեցին Գեղարդից հետո ամենանշանավոր և խոշոր ժայռափոր ճարտարապետական համալիրն է Հայաստանում, իսկ ներքին հնչեղությամբ այն առաջինն է հայ եկեղեցական շինարարության մեջ՝ իր կառուցողական բարձր արվեստով:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Գյուղն ունի մշակույթի տուն, գրադարան, դպրոց և բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Մարտիրոս գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 84 հուշարձան: